CCBE-Ն ԻՐ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԱՅՏՆԵԼ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԿՈՒ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

03.03.2023 17:45

Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդը (CCBE), որը ներկայացնում է 46 երկրների փաստաբաններին ու փաստաբանական միությունները, և նրանց միջոցով ավելի քան 1 միլիոն եվրոպացի իրավաբանների, իր մտահոգությունն է հայտնել փաստաբաններ Մարզպետ Ավագյանի և Էմանուել Անանյանի նկատմամբ՝ ոստիկանության աշխատակիցների կողմից վերջերս կատարված ֆիզիկական և բանավոր ոտնձգության վերաբերյալ:

Ընդգծենք, որ ՀՀ փաստաբանների պալատը դիմել էր Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդին (CCBE)՝ կոշտ արձագանք և դիրքորոշում ստանալալու ակնկալիքով, քանի որ հիշյալ կառույցը մեծ ուշադրություն է դարձնում մարդու իրավունքների և օրենքի գերակայության հարգմանը և հատկապես մտահոգված է ամբողջ աշխարհում իրավապաշտպանների իրավիճակով:

ՀՀ փաստաբանների պալատի դիմումին ի պատասխան, հաղորդվում է, որ ուսումնասիրելով դեպքը և ՀՀ փաստաբանների պալատի կողմից ներկայացված դիմումը Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդը հասկանում է, որ փաստաբաններ Մարզպետ Ավագյանն ու Էմանուելը Անանյանը ոստիկանության բաժնում էին՝ պաշտպանելու իրենց պաշտպանյալների շահերը, ովքեր անչափահաս են և ովքեր պնդում էին, որ իրենց խոշտանգել և ծեծել են նույն ոստիկանները, ովքեր հարձակվել են և փաստաբանների վրա:

Ստորև ներկայացնում ենք նաև Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի (CCBE) պաշտոնական գրությունը և հայերեն լեզվով՝ ոչ պաշտոնական թարգմանությունը.

ԲԵՌՆԵԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

ԲԵՌՆԵԼ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

Նշենք նաև, որ CCBE-ն այս մասին գրառումներով է հանդես եկել սոցիալական տարբեր հարթակներում, որոնց հղումները ևս ներկայացնում ենք ստորև.

CCBE-Ի Պաշտոնական կայքում

Twitter :

https://twitter.com/CCBEinfo/status/1631582433727447040

https://twitter.com/CCBEinfo/status/1631581900383854596

LinkedIn :

https://www.linkedin.com/feed/update/urn:li:activity:7037350085755592704

Facebook :

https://www.facebook.com/ccbeinfo/posts/pfbid0okgrbkwVdRrKVyxMjBivEMCwXH2gZaCD7HUSc6UDvZsPvA65Zqe6xxcMiy9UbQeml

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })